

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի նիստի

ք. Երևան

02 փետրվարի 2021թ.

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Կառավարման խորհրդի նախագահի 2021 թվականի հունվարի 25-ի N 01-Լ և 2021 թվականի հունվարի 29-ի N 02-Լ որոշումները և ղեկավարվելով 2019 թվականի օգոստոսի 8-ի ՀՀ կառավարության N 1000-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով՝ կայացել է Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Կառավարման խորհուրդ) նիստ:

Կառավարման խորհրդի նիստին մասնակցել են.

Ռոմանոս Պետրոսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)
Սուրեն Պապիկյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Արթուր Ասոյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար
Ավագ Ավանեսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արման Պողոսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Վահե Դանիելյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Գևորգ Բալումյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ընդերքաբանության և շրջակա միջավայրի պահպանության ամբիոնի դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
Պերճ Խաչատրյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն
Էլեկտրոնային քվեարկությամբ չի մասնակցել	
Մարատ Գրիգորյան	Հայաստանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկան

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու վերաբերյալ:

Էլեկտրոնային քվեարկությամբ հորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան հաշվետվությունը:

7 կողմ, 1 դեմ

հորհրդի դիտարկումները.

ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Արթուր Ասոյանը ներկայացրել է հետևյալ դիտարկումը՝

Կողմ է քվեարկել, աշխատանքային կարգով ներկայացված առաջարկությունների ընդունումը՝ վերապահումով.

1. «Ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծություն» բաժնում ըստ ոլորտների տարանջատված ենթավերնագրերի և այդ ենթավերնագրերի բովանդակությունը որոշ հատվածներում միմյանց չեն համապատասխանում: Անհրաժեշտ է շտկել այդ տեխնիկական խնդիրը:

2. Ստուգումների մասով բերված տեղեկատվությունը ընդհանուր ուղղություններով պետք է համեմատվի նախորդ երկու տարիների իրավիճակներն արտացոլող տվյալների հետ՝ համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի:

3. Ամբողջովին վերափոխել օրենսդրություն մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ հաշվետվության բաժինը: Անհրաժեշտ է նշել միայն այն իրավական ակտերի անվանումները, որոնց մեջ փոփոխություններ կատարելու առաջարկություններով Տեսչական մարմինը հանդես է եկել 2020 թվականին, ինչպես նաև հարկավոր է նշել այն առաջարկությունների հակիրճ բովանդակությունները:

4. Ավելացնել դատարան բողոքարկված գործերի վերաբերյալ ընդունված որոշումների մասին տեղեկատվությունը: Բողոքների մասով ներառել նաև նախորդ երկու տարիների մասին տեղեկատվությունը՝ Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան: Հստակության նպատակով՝ նույն բաժնում բոլոր «պ/մ» բառերը փոխարինել «պահանջի մասին» մասին բառերով:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ներկայացուցիչ Պերճ Խաչատրյանը քվեարկել է դեմ և ներկայացրել է հետևյալ դիտարկումը.

1. Բացակայում է տեղեկատվություն, թե հաշվարկված շրջակա միջավայրին պատճառված վնասի գումարից և իրավախախտումների համար նշանակված տուգանքների գումարներից որքանն է գանձվել, որքանը չի գանձվել և ինչ խնդիրներ են առկա այդ բնագավառում:

2. Չկա վերլուծություն՝ ստուգումների և այլ վարչական վարույթների արդյունքում տրված հանձնարարականների կատարման ընթացքի մոնիթորինգի վերաբերյալ:

3. Ռիսկերի վերլուծությունը՝ ըստ ուղղությունների (բոլոր ուղղությունների մասով) խիստ վերացական է, չի պարունակում հստակ տեղեկություններ՝ խախտումների տեսակների, վիճակագրության և դինամիկայի մասին:


4. Հաշվետվության մեջ նշված է (էջ 35), որ 3 ստուգում անվավեր է ճանաչվել. որևէ նշում չկա, թե որ մարմնի կողմից և ինչ հիքով: Եթե ստուգման ընթացքում խախտումներ են թույլ տրվել տեսչական մարմնի աշխատակիցների կողմից, ապա կարգապահական ներգործության ինչ միջոցներ են կիրառվել խախտում թույլ տված աշխատակիցների նկատմամբ:

5. Հաշվի առնելով, որ հաշվետվությունը հրապարկվելու է, առավել նպատակահարմար կլիներ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները ներկայացնել ոչ թե հողվածների համարների, այլ դրանց ներքո ամփոփված խախտումների նկարագրի տեսքով՝ լայն հանրության համար առավել ընկալելի դարձնելու նպատակով:

6. Օրենսդրական բացերը լրացնելու նպատակով առաջարկված նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների հատվածում նշված են միայն իրավական ակտերի վերնագրեր՝ առանց մանրամասնելու, թե առաջարկվող փոփոխությունն ինչի մասին է, ինչին է միտված և ինչ խնդիրներ է լուծելու:

7. Հաշվետվության մեջ ներկայացված չէ տեղեկատվություն՝ վերադասության կարգով բողոքարկումների մասին, ինչը հնարավորություն կտար պարզելու՝ արդյոք տեսչական մարմնում գործում է սեփական ստորաբաժանումների կամ պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ վարչական ակտերը ամեն գնով պաշտպանելու արատավոր պրակտիկան, թե վերադաս պաշտոնատար անձինք պահպանում են օբյեկտիվությունն ու անաչառությունը:

ՀՀ շրջակա միջավայրի նախարար (խորհրդի նախագահ)  Ռ.Պետրոսյան

ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (խորհրդի քարտուղար)  Լ. Բարսեղյան